ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉԸ

(Խ. Ս. Սարգսյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 40-ամյակի առիթով)

Խորեն Սարգսյանի անունը լայնորեն հայտնի է մեր հանրապետության գիտական ու գրական հասարակայնությանը։ Նա անցել է գիտական-գրական գործունեության երկար ու բեղմնավոր ուղի՝ ստեղծելով նշանակալից և բնորոշ ճանաչման արժանացած վաստակ՝ թե՛ գրականագիտության ու տեքստաբանության և թե՛ գրական քննադատության ասպարեզում։

Խ. Սարգսյանը մեր հանրապետության հնագույն գիտական աշխատողներից է։ 1921 թ. Բաքվից տեղափոխվելով Երևան, նա աշխատանքի է անցնում սովետահայ առաջին գիտական հիմնարկում՝ Հայաստանի գիտության ինստիտուտում։ Երիտասարդ գիտնականի եռանդը, հմտությունն ու կազմակերպչական ունակությունները առանձնապես բուռն կերպով են դրսևորվում Գրականության թանգարանում աշխատելու տարիներին։ Լինելով նախ բաժնի վարիչ, իսկ հետո՝ թանգարանի դիրեկտոր, Խ. Սարգսյանը քիչ չանք չի գործադրել հայ գրականության կլասիկների ձեռագրերի հավաքման ու գիտական մշակման, ինչպես նաև գիտության, գրականության ու արվեստի պրոպագանդման նպատակով ցուցահանդեսներ կազմակերպելու գործում։ 1936—37 թթ. նա ղեկավարել է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի գրականության սեկցիան։ Հաջորդ տարվանից աշխատանքի է անցնում ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության և լեզվի ինստիտուտում՝ նախ որպես գիտական քարտուղար, իսկ ապա՝ դիրեկտոր։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ստեղծման օրից մինչև 1947 թվականը Խ. Սարգսյանը ղեկավարում է Գրականության ինստիտուտը, իսկ այժմ նույն ինստիտուտի հայ հին գրականության սեկտորի վարիչն է։

Արդասավոր է եղել Խ. Սարգսյանի գիտական-ստեղծագործական գործունեությունը։ Մի քանի տասնյակի հասնող նրա աշխատություններն ու ուսումնասիրությունները ընդգրկում են հայ գրականագիտության մի շարք կարևոր պրոբլեմներ։ Նա գործոն մասնակցություն է ցուցաբերել հայ նոր գրականության պատմության ստեղծման աշխատանքներին՝ առանձնապես մանրակրկիտ հետազոտության ենթարկելով Զազարոս Աղայանի և Միրզայել Նալբանդյանի գրական ժառանգությունը, անցյալ դարի 50—60-ական թվականների հայ գրականության պատմությունը։ Հետաքրքիր ու արժեքավոր են Խ. Սարգսյանի «Վահան Տերյան», «Մ. Արեղյանը և հայ հին գրականությունը», «Մ. Նալբանդյանը և լեզվի հարցերը», «Մ. Նալբանդյանի գրական ստեղծագործությունը», «Ստեփան Զորյան. տասական թվականներ» ուսումնասիրությունները։

Խ. Սարգսյանը ակտիվորեն մասնակցել է սովետահայ գրականության զարգացման պրոցեսին։ Նա եղել է Հայաստանի Սովետական գրողների Ֆեդերացիայի և «Գրական թերթ»-ի պատասխանատու քարտուղար, Գրողների միության կից գրական համալսարանի վարիչ (1935—36 թթ.)։ Հայաստանի Սովետական գրողների միության վարչության անդամ։

Խ. Սարգսյանը ճանաչված է նաև որպես հմուտ գրական քննադատ։ Նա հաճախակի հանդես է եկել մամուլում հետաքրքիր հոդվածներով։ Հատկապես արժեքավոր են Ակսել Բակունցին, Ստ. Զորյանին, ինչպես նաև Հայրենական Մեծ պատերազմի շրջանին նվիրված հոդվածները։ 1946 թ. լույս տեսավ նրա «Հայրենական պատերազմը և գրականությունը» ժողովածուն։

Հատուկ ուշադրության են արժանի Խ. Սարգսյանի աշխատանքները տեքստաբանության ասպարեզում։ Նա մեր հանրապետության հնագույն տեքստաբաններից է և մեծ վաստակ ունի գիտության այդ մարզում։ Իր հմուտ, բարեխիղճ ու տքնաջան աշխատանքով Խ. Սարգսյանը հսկայական ավանդ է ներմուծել սովետահայ տեքստաբանության հիմնադրման ու զարգացման գործում։ Նրա ջանքերով են պատրաստվել և հրատարակվել հայ դասական հեղինակների գրական

ժառանգության բազմաթիվ նմուշները, Պ. Պողոսյանի, Ղ. Աղայանի անտիպ երկերն ու նամակները և Մ. Նալբանդյանի երկերի երկհատորյակը ուսումնասիրեն։

Խ. Սարգսյանը մեծ երախտիք ունի բանասեր-տեքստաբանների ու գրականագետների երիտասարդ կադրեր պատրաստելու գործում։ Նա երկար տարիներ Երևանի Պետական համալսարանում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդել է հայ և ռուս գրականությունների պատմություն, ղեկավարել է մի շարք ասպիրանտների գիտական աշխատանքները։ Չնայած պատկառելի տարիքին, նա այժմ էլ երիտասարդական եռանդով շարունակում է իր բեղմնավոր գիտական գործունեությունը նույնպիսի սիրով ու նվիրվածությամբ, ինչպես աշխատել է մինչև այսօր։

* * *

1961 թ. դեկտեմբերի 27-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ Խ. Սարգսյանի մեծարման երեկոն՝ նվիրված նրա ծննդյան 70 և գիտական գործունեության 40-ամյակին։ Երեկոն ներածական խոսքով բացեց Գրականության ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովնանը։ Հորելյարի կյանքի և գործունեության մասին հետաքրքիր զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ինճիկյանը։ Այնուհետև ողջույնի խոսք ասացին՝ Հայկական ՍՍՌ ԳԱ Նախագահության կողմից՝ ակադեմիկոս Ա. Կարինյանը, Հայաստանի Սովետական գրողների միության կողմից՝ Հր. Թամրազյանը, Լեզվի ինստիտուտից՝ պրոֆ. Ե. Տեր-Մինասյանը, Գրականության ինստիտուտի սովետահայ գրականության սեկտորի անունից՝ Ս. Աղաբաբյանը, հայ հին գրականության սեկտորից՝ Ա. Սրապյանը, հայ նոր գրականության սեկտորից՝ Կ. Դանիելյանը, Գրականության և արվեստի թանգարանի կոլեկտիվի անունից՝ Գ. Ստեփանյանը, Մատենադարանից՝ Հ. Փափազյանը, Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի կողմից՝ Ռ. Հարությունյանը, Արվեստի ինստիտուտից՝ Մ. Մուրադյանը, Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության վարչության կողմից՝ Ե. Հովհաննիսյանը, Ենագիտության և ազգագրության ինստիտուտից՝ Ա. Նազինյանը, Պատմության ինստիտուտից՝ Հ. Ղազարյանը, Ակադեմիայի Հրատարակչության կողմից՝ Հ. Գալստյանը, Հեռակա մանկավարժական ինստիտուտից՝ Մ. Հյուսյանը։ Պոետ Համո Սահյանը կարդաց հորելյարին նվիրված իր բանաստեղծությունը։

Վերջում ընթերցվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագիրը Խորեն Սարգսյանին գիտության վաստակավոր գործչի կոչում շնորհելու մասին։

Մեծարման երեկոն անցավ ջերմ ու սրտառուչ մթնոլորտում։